ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի մայիսի 18-ից 31-ն ընկած ժամանակահատվածում՝ Հայաստանում Էներգետիկայի Տրանսֆորմացիայի Ոլորտում Կլիմայական Լուծումների Գիտական Հետազոտությունների Զարգացման ծրագրին (ԷՏԿԼԳՀՋ/ STREACS) մասնակցության նպատակով Իռլանդիայի Հանրապետության Մայնութ քաղաքում գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Մասնակցի անուն, ազգանուն և զբաղեցրած պաշտոն.

Աստղիկ Բաղրամյան, Հանձնաժողովի նախագահի օգնական.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Իռլանդիայի Հանրապետություն, Մայնութ քաղաք, 2025 թվականի մայիսի 18-31.

3. Գործուղման հիմքը.

Էներգետիկայի տրանսֆորմացիայի ոլորտում կլիմայական լուծումների գիտական հետազոտությունների զարգացման ծրագրի (ԷՏԿԼԳՀՋ/ STREACS) շրջանակում Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնի կողմից մասնակցության հաստատում.

4. Գործուղման նպատակը.

Սկսնակ հետազոտողների կարճաժամկետ գիտական այցին մասնակցության արդյունքում զարգացնել Հայաստանի գիտահետազոտական ներուժը՝ նպաստելու Հայաստանի Հանրապետությունում մաքուր և վերականգնվող էներգիային արագ անցմանը՝ միևնույն ժամանակ ամրապնդելով ՀՀ էներգետիկ անվտանգությունը:

5. Գործուղման արդյունքները.

Կարճաժամկետ գիտական առաքելությունը զգալիորեն նպաստել է մասնակիցների իրավական, ակադեմիական հետազոտություններ կատարելու հմտությունների կատարելագործմանը: Այցի շրջանակում մասնակիցները ծանոթացել են էներգետիկ և կլիմայական անվտանգության ոլորտում գիտահետազոտական ուսումնասիրության մեթոդներին ու մոտեցումներին: Այցի ընթացքում կատարվել է երիտասարդ հետազոտողների կարիքների վերլուծություն էներգետիկ անցման և անվտանգության ոլորտներում, և ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ ըստ վեր հանված կարիքների շարունակելու հետագա համագործակցությունը:

Կարճաժամկետ գիտական այցի շրջանակում Մայնութի համալսարանի ներկայացուցիչների հետ իրականացվել է ակադեմիական հետազոտության իրականացման մեթոդաբանության առնչությամբ փորձի փոխանակում:

Կարճաժամկետ գիտական առաքելությանը մասնակցության արդյունքում հնարավորություն է ընձեռվել մասնակիցներին՝ ընդլայնելու սեփական

պատկերացումները Էներգետիկ համակարգի փոփոխման և էներգետիկ անվտանգության ոլորտում առաջադեմ փորձի վերաբերյալ և կիրառել ձեռք բերված հմտությունները առաջիկայում կատարվելիք համատեղ ուսումնասիրության շրջանակում: Այցի շրջանակում մասնակիցները ձևավորել են կապեր Իռլանդիայի Հանրապետության Մայնութի համալսարանի գիտաշխատողների հետ և ստեղծել նախադրյալներ հետագա համագործակցության համար:

6. Առաջարկություններ և գործուղման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածություններ.

Որպես կարճաժամկետ գիտական այցի առաջիկա վերջնարդյունք՝ նախատեսվում է Էներգետիկայի տրանսֆորմացիայի ոլորտում կլիմայական լուծումների գիտական հետազոտությունների զարգացման ծրագրի շրջանակում իրականացնել համատեղ ուսումնասիրություն մաքուր և վերականգնվող էներգիայի ոլորտում և ևս մեկ կարճաժամկետ գիտական առաքելություն:

Հանձնաժողովի նախագահի
օգնական՝ **Ա. Բաղրամյան**